ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2025թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.»

Հ/Հ	**Քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչություն**	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000

3	գործավար	1	248,200		248,200
-	**Քաղաքաշինական փաստաթղթերի կազմման բաժին**				
3	Բաժնի պետ	1	408,000		408,000
4	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000
5	առաջատար մասնագետ	4	282,200		1,128,800
-	**Քաղաքաշինության վերլուծության բաժին**				
6	Բաժնի պետ	1	408,000		408,000
7	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
8	առաջատար մասնագետ	6	282,200		1,693,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**21**			**6,878,200**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «263,489,445» փոխարինել «263,475,845» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «693,408,845» փեխարինել «693,395,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Սույն որոշման նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչությունն (այսուհետ՝ Վարչություն) ունի ընդհանուր 21 հաստիք, ներառյալ՝ Վարչության պետի, Վարչության պետի մեկ տեղակալի, գործավարի հաստիքները: Վարչության կազմում գործում են երկու բաժիններ՝ քաղաքաշինական փաստաթղթերի կազմման բաժին և քաղաքաշինության վերլուծության բաժին: Վարչությունը քաղաքաշինության բնագավառում՝ իրավական ակտերով Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների ապահովման ուղղությամբ իրականացնում է մեծածավալ աշխատանքներ: Հաշվի առնելով Երևան քաղաքում ընթացող շինարարության ծավալը, կառուցապատման և քաղաքաշինական բնույթի բազմաթիվ դիմումների առկայությունը, աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության ծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտություն է առաջացել վարչության քաղաքաշինական փաստաթղթերի կազմման բաժնի **երկու գլխավոր մասնագետների համայնքային ծառայության հաստիքները փոխարինել առաջատար մասնագետների համայնքային ծառայության հաստիքներով:**

Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ համայնքային ծառայության գլխավոր մասնագետի հաստիքը զբաղեցնող անձը պետք է ունենա առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ինչը խոչընդոտ է հանդիսանում կադրերի ընտրության շրջանակի ընդլայնման և առավել երիտասարդ և նորարար մասնագետներով համալրման: Երիտասատարդ սերնդի ներկայացուցիչների ներգրավումը համայնքային ստորաբաժանումներում հնարավորություն կընձեռնի երիտասարդությանն իրենց նորարար գաղափարները և գիտելիքները ներդնել աշխատանքային գործընթացներում, իսկ համայնքի կողմից տրամադրվող ծառայություններն առավել գամահունչ ժամանակին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 41-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ